Քաղաքական դաշտի չքաղաքականացվող սեքսիզմը.

քաղաքացիական հասարակության արձագանքն ու համակարգերի լռությունը

Հեղինակներ՝ Սիրան Հովհաննիսյան, Արմինե Մարկոսյան

HEINRICH BÖLL STIFTUNG
ԵՐԵՎԱՆ
Հարավային Կովկասի տարածաշրջան

Համառոտագիր

Էսսեի շրջանակներում հեղինակները փորձել են անդրադառնալ Հայաստանի քաղաքական դաշտում սեքսիզմի դրսևորումներին և, հիմնվելով մի քանի օրինակների, ինչպես նաև քաղաքական ասպարեզում դրանց նկատմամբ համարժեք արձագանքի բացակայության վրա, անդրադարձել են սեքսիզմի վերլուծությանը: Էսսեում հիմնական շեշտը դրվում է քաղաքացիական հասարակության վրա, քանի որ ակնհայտորեն հենց վերջինս է փորձում ինչ-որ կերպ քննադատել և դատապարտել սեքսիզմը քաղաքական դաշտում: Տեքստում նաև առկա է քննադատություն քաղաքական դաշտում սեքսիզմի դրսևորումների նկատմամբ համակարգային արձագանքի բացակայության վերաբերյալ:

Այս հոդվածում արտահայտված մտքերը հեղինակինն են և չեն արտահայտում Հայնրիխ Բյոլ հիմնադրամի Հարավային Կովկասի տարածաշրջանի երևանյան գրասենյակի տեսակետը:

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ 4

ՍԵՔՍԻԶՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 6

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԵՐԿՈՒ,
ԳՈՒՅԵ ԵՐԵՔ ԵՎ ԱՎԵԼԻ ՔԱՐԵՐԻ ԱՐԱՆՔՈՒՄ 13

ԱՄՓՈՓՈՒՄ ԿԱՄ ՆՈՐ ՄՏԱԾԵԼՈՒ ՏԵՂԻՔ 16

Օգտագործված գրականություն 18

Օնլայն աղբյուրներ 19

Նախաբան

«Քաղաքականությունը աղտ է, կեղտ է, կնոջ տեղը չէ». ահա թե ինչ է մեզ մտածել տալիս հայրիշխանական համակարգը: Անգամ չգիտակցված, բայց երբեմն էլ՝ խիստ գիտակցված, հենց այսպես են ընկալում քաղաքականությունը քաղաքական գործիչները: «Կանանց հզորացման ջատագովների» շղարշի տակ բազմիցս ականատես ենք եղել, թե ինչպես են քաղաքական գործիչները և հատկապես տղամարդ քաղաքական գործիչները հայհոյում, վիրավորում, նվաստացնում, սեռական ակնարկներ և ոտնձգությունների հասնող ռեպլիկներ անում կին և տղամարդ քաղաքական գործիչների, լրագրողների և մյուս գործընկերների հասցեին: Բազմիցս տեսնում ենք և վերջերս էլ ականատես եղանք, թե ինչպես է քաղաքական գործիչն առանց մի պահ վարանելու շեշտադրում մեկ այլ գործընկերոջ գենդերը՝ փառք տալով կյանքին, որ վերջինս կին չի ծնվել[1]: Մեկ այլ քաղաքական գործիչ էլ խորհրդարանական ամբիոնից հակադրվելու համար կին գործընկերոջը մեղադրում էր սեռականացված նայելու և խոսելու մեջ[2]: Մյուսը հորդորում էր իրեն պրովոկացիոն թվացող հարց տված լրագրողին վարսավիրանոց գնալ[3]: Մեկ այլ գործիչ մեղադրվում էր բռնության մեջ: Մեկ ուրիշը քննարկում է մեկ այլ քաղաքական գործչի սեռական կյանքը, ամուսնական ապագան, մազերը, շրթունքները, իսկ երկրի գլխավոր քաղաքական դեմքերից մեկն էլ առաջարկում էր «շարունակել քեռուդ կնգան դոմփել»[4]: Բոլորս էլ հիշում ենք, երբ արդարադատության նախկին նախարարներից մեկի՝ ամբիոնից ելույթի ժամանակ ինչ երջանիկ ժպիտներ էին դահլիճի առաջին շարքերում, քանզի տակավին կրծքավանդակի հատվածում շապիկի կոճակը արձակվել էր: Օ՛հ: Դեռ չենք խոսում քաղաքական դիսկուրսներում սովորական դարձած սեռականացված և գենդերացված հայհոյանքների մասին:

1| Բարեբախտաբար Փաշինյանը աղջիկ չի ծնվել, ազգային խայտառակություն կլիներ. Քոչարյան, Panorama.am, https://www.youtube.com/watch?v=sbM_DgX8oGc

2| «Ալեն Սիմոնյանի ամբողջ ելույթը խտրականություն էր, սեքսիզմ և նվաստացում՝ ուղղված ընդդիմությանը և հատկապես կնոջը». Զառա Հովհաննիսյան, Մեդիալաբ, https://medialab.am/61573/

3| Մի գոռա. ես տղաների վիճակը գիտեմ. գնա վարսավիրանոց. Անդրանիկ Քոչարյան, a1plus.am, https://www.youtube.com/watch?v=-6DG-3SEHow

4| ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի գրառումը ֆեյսբուքում https://www.facebook.com/nikol.pashinyan/posts/pfbid02dvxuULKVbLBdbCuDyjtmZU31wm87pg3WEiBh3SDRnTzxHwE6bXevihjaAPGq6QUUl?rdid=OOttXKwrAgxiKrt6#

Սեքսիզմը սահմաններ չունի: Սեքսիզմը մեկ սահմանման մեջ տեղավորելը թերևս միամտություն կլինի: Մարդիկ այսօր վախենում են արհեստական բանականության՝ գուցե նաև մոտակա հեղաշրջումից, սակայն մոռանում են տարիներ շարունակ ձգվող պայքարները սեքսիզմի, ռասիզմի, պատերազմների, մարդկանց անօրինական վաճառքի ու ստրկության, խոշտանգումների և մի շարք այլ մարդածին և մտացածին աղետների դեմ: Սեքսիզմի քննադատության թե՛ պրակտիկան, թե՛ արդեն լայնածավալ գրականությունը մատնանշում են մի շարք խնդիրներ, որոնց ծանոթ է ֆեմինիստական մեծ համայնքը: Պայքարի դժվարությունը նաև այն է, որ սեքսիզմի դրսևորումների մասշտաբները, ծավալներն ու ուղղություններն իսկապես չունեն սահմանափակում: Այսօր մեկի հեշտոցի քննադատությունն է[5], վաղը՝ տրանս կնոջը վառելու կոչեր[6], որ բավարար կին չէ, մյուս օրը՝ դպրոցականի նկատմամբ վերաբերմունքը, որ ինքն այնքան էլ «կանացի չէ»[7]: Թե ինչո՞ւ դպրոցականը պետք է մտածի իր սեռականության ու գրավչության մասին ավելի, քան Պյութագորասի թեորեմի, տիեզերքի ձգողականության և շրջակա միջավայրի նկատմամբ հոգատարության մասին: Այս հարցերը հռետորական չեն, դրանք մատնանշում են այն, որ համակարգերը, որոնք պայքարում են մի շարք կարծրատիպեր կոտրելու դեմ, ցավոք, ընկնում են այն նույն ծուղակները, որոնց դեմ պայքարում են:

5| Հասարակությունը պետք է մերժի և չլեգիտիմացնի կանանց նկատմամբ ատելության խոսքը. ՀԿ-ների հայտարարությունը՝ Վարդան Ղուկասյանի անընդունելի արտահայտությունների առնչությամբ, Factor.am https://factor.am/876370.html

6| Սարգսյան, Ե. Քաղաքում ոչինչ չի փոխվել, ուղղակի տրանս* կնոջ են սպանել ու վառել https://bit.ly/3YHTGkl

7| Պրակտիկայում հանդիպած փորձառություն

Այս էսսեն կամ մտորումների բույլը միտված է վերհանելու բավական երկար տևած ու շարունակվող քննարկումներից մի քանի մտքեր: Տեքստը ցանկալի է կարդալ և ընկալել որպես քննադատական մոտեցում սեփական մտքերին, համոզմունքներին, աշխատանքին ու քննադատություններին: Հեղինակների պատկերացմամբ՝ տեքստը գտնվում է հասանելի ակադեմիական և հիմնավորված հանրային տեքստի խաչմերուկում: Այն մանիֆեստ չէ, նախընտրական քարոզարշավի ընթացքում որևէ կողմից մանիպուլացնելու համար չէ, առավել ևս՝ սեքսիզմի դեմ ջատագովների մեղադրանք չէ: Այս էսսեն մտորումների, մտավախությունների և ամենօրյա կտրվածքով խնդիրներին այս կամ այն կերպ և չափով առնչվող մարդկանց խոհերի շատ փոքր մասի համակարգումն է մեկ տեղում: Սա հնարավորություն է խոսելու ու քննարկելու խնդիրներ, որոնք դուրս են մնում առաջնային քննարկումներից՝ տիրող քաոսի և ակնկալվող ապագայի շուրջ խուճապի մթնոլորտից ելնելով:

Սեքսիզմը և հայաստանյան քաղաքականությունը

Սեքսիզմի մասին խոսելիս հարկավոր է հասկանալ ու գիտակցել դրա համակարգային բնույթը: Այն մեկ անձի պահվածքի կամ մեկ պատահական վիրավորական արտահայտության դրսևորում չէ: Տարածքը, որտեղ գործում ու ծաղկում է սեքսիզմը, շատ ավելի լայն ու հանրային է՝ քաղաքական կուսակցություններից, մեդիայից մինչև հանրային դիսկուրս և ինստիտուցիոնալ մշակույթ, որոնք վերարտադրում են նույն կարծրատիպերը. առնականը, տղամարդկայինը որպես ստանդարտ, իսկ կնոջ ներկայությունը կամ գոյությունը՝ որպես երկրորդական, տղամարդուն ածանցյալ:

Սեքսիստական արտահայտություններն օդից չեն գոյանում, այլ հիմված են արդեն իսկ հաստատված, թեպետ երբեմն՝ անտեսանելի կանոնների վրա, որոնք որոշում են, թե ով պիտի բարձր խոսի, ում մտահոգություններն են լուրջ վերաբերմունքի արժանի, ում կարելի է նվաստացնել՝ առանց լուրջ հետևանքների կամ ընդհանրապես որևէ հետևանքի: Երբ քաղաքական դաշտը/համակարգը կառուցվում է ուժի ու իշխանության ցուցադրության, վիրավորանքների լեզվի և պերֆորմատիվ ագրեսիայի վրա, կանանց մարմինը, սեռականությունը, ինքնությունն ու պահվածքը դառնում են քաղաքական գործիք: Արդյունքում ունենում ենք ոչ թե մի քանի դիպվածային սեքսիստական արտահայտություններ, այլ սեքսիզմի համակարգային դրսևորումներ, որոնք ծառայում են այս կամ այն կողմի քաղաքական շահերին և էլ ավելի խորացնում հասարակության մեջ առկա անհավասարությունները:

Իշխանությունը միայն ֆիզիկական կերպով չէ, որ ցուցադրվում է, միայն ֆիզիկական բռնությունը չէ, որ վերահաստատում է այդ իշխանությու-

նը: Ինչպես Բուրդյոն է նշում՝ իշխանությունը կամ տղամարդկային գերիշխանությունը հաճախ դրսևորվում է «սիմվոլիկ բռնության» տեսքով[8]: Սրանք այն անտեսանելի ու առօրյայում աննկատ մնացող ձևերն են, որոնցով վերահաստատվում է տղամարդու գերիշխանությունը կնոջ հանդեպ՝ խոսքերի, մտածողության, գործողությունների տեսքով, որոնք հարցադրման չեն ենթարկվում, այլ ընդունվում են որպես «բնական երևույթ»: Նման բռնությունը շատ հաճախ աննկատ է մնում նաև բռնության ենթարկվողի կողմից, որովհետև իշխանության նման սիմվոլիկ ծեսը իշխանությունը վերածում է օրենքի, օրինականության ու նորմայի: Դա է պատճառը, որ իշխանության սիմվոլիկ բռնության դրսևորումները հաճախ վրիպում են նաև վերլուծողների աչքերից, մինչդեռ այն փաստը, որ սիմվոլիկ բռնությունն աննկատ է մնում (դոքսայի պարադոքս[9]), ամրապնդում է գերիշխելու բնականության մասին առասպելը:

8| Pierre Bourdieu, ***Masculine Domination***, trans. Richard Nice (Stanford, CA: Stanford University Press, 2001).

9| Paradox of doxa - Բուրդյոյի արտահայտությունն է, որ մատնանշում է իրավիճակը, երբ հասարակական կարգի պատճառով առավել անբարենպաստ վիճակում գտնվող մարդն այնուամենայնիվ ընդունում է այդ կարգը որպես բնական և ինքնին ակնհայտ՝ այդպիսով նպաստելով դրա վերարտադրությանը:

Եթե այս տեսական ոսպնյակներն ուղղենք դեպի հայաստանյան քաղաքական դաշտ, ապա կտեսնենք սեքսիզմի տարբեր դրսևորումներ՝ սեռականացված վիրավորանքներ, արտաքին տեսքի ու մարմնի վրա հարձակումներ, տղամարդկության համար պայքար՝ «կանացին» նվաստացնելու հաշվին, կանանց վարքի մասին բարոյական դատողություններ, կանանց մանկամտացում (ինֆանտիլիզացիա) քաղաքական դիսկուրսներում, իսկ ավելի լայն առումով՝ քաղաքական կուսակցությունների ներսում ինստիտուցիոնալ սեքսիզմ, ինչպես նաև մեդիայի կողմից այս բոլոր սեքսիստական դրսևորումների ընդլայնում ու տարածում՝ հատկապես թվային մեդիայի այս դարաշրջանում:

Սեքսիզմի համակարգային բնույթը հասկանալուն օգնում է մեկ այլ փիլիսոփա ևս: Ջուդիթ Բաթլերը պնդում է, որ գենդերը բնական փաստ չէ, այլ անընդհատ կրկնվող պերֆորմանս, որը ձևավորվում է հասարակության ակնկալիքներից[10]: Եթե գենդերը դիտարկենք հայաստանյան քաղաքականության մեջ, ապա կտեսնենք, որ այդ պերֆորմանսները հստակ կանոններով են առաջնորդվում. տղամարդ քաղաքական գործիչներից ակնկալվում է մարմնավորել իշխանություն ու պատրաստ լինել առճակատման, իսկ կանանցից՝ լինել զուսպ ու համեստ: Իսկ ինչ է տեղի ունենում, երբ կինը մի պահ համարձակվում է իրեն դուրս դնել զուսպ ու համեստի գենդերային պերֆորմանսից: Միանգամից նրա վրա

10| Judith Butler, ***Gender Trouble: Feminism and the Subversion of Identity*** (New York: Routledge, 1999).

է տեղում սեքսիստական հարձակումների տարափը, որի նպատակը կնոջն «իր տեղում, իր դերում» պահելն է: Մյուս կողմից էլ՝ տղամարդ քաղաքական գործիչները, որոնք պիտի պատրաստ լինեն առճակատման ու սովորաբար հենց այդպես էլ առաջ են տանում իրենց քաղաքական օրակարգերը, առճակատման այդ պայքարներում թիրախավորում են կանանց կամ կանացիությունը՝ հակառակորդին վիրավորելու համար օգտագործելով հենց կանանց դեմ ուղղված սեքսիստական արտահայտություններ: Այստեղ գործում է թերևս այն տրամաբանությունը, որը Սիմոն դը Բովուարն անվանում է «կինը բացասականն է»[11].

> *«...որովհետև հասկացվում է, որ տղամարդ լինելն առանձնահատկություն չէ. տղամարդն իրավացի է ուղղակի որովհետև տղամարդ է, կինն է, որ սխալ է»:*[12]

Ստացվում է, որ քանի որ կինն է սխալն ու բացասականը, տղամարդ քաղաքական հակառակորդիդ կնոջ հատկանիշներ վերագրելը կդառնա նրան վիրավորելու ու ստորացնելու ամենահաջող միջոցը: Համենայն դեպս՝ այդպես է վարվում տղամարդ քաղաքական գործիչների մեծ մասը:

Սեքսիզմի դրսևորման գերադրական ձևերից է միզոգինիան կամ կնատյացությունը: Քեյթ Մաննը կնատյացությունը սահմանում է հետևյալ կերպ.

> *«կնատյացությունը պետք է հասկանալ նախ և առաջ որպես հայրիշխանական կարգի «իրավապահ» ճյուղ, որի ընդհանուր գործառույթն է վերահսկել և կիրառության մեջ դնել իր կառավարող նորմերն ու ակնկալիքները»*[13]:

Համանման կերպով՝ սեքսիզմն էլ պետք է հասկանալ «որպես հայրիշխանական կարգի «արդարացնող» ճյուղ, որն ունի հայրիշխանական սոցիալական հարաբերությունները ռացիոնալացնելու և արդարացնելու ընդհանուր գործառույթ»[14]: Սեքսիզմն աշխատում է, երբ սեռերի միջև տարբերությունները, որոնք սոցիալական դաշտում արդեն դրսևորվում են գենդերային դերերի տարբերությունների տեսքով, բնականացվում

11| Simone de Beauvoir, ***The Second Sex,*** trans. Constance Borde and Sheila Malovany-Chevallier (New York: Vintage Books, 2011), p.28.

12| Անգլ.՝ "[...] because it is understood that being a man is not a particularity; a man is in his right by virtue of being man; it is the woman who is in the wrong."

13| Kate Manne, ***Down Girl: The Logic of Misogyny*** (New York: Oxford University Press, 2018), p.78. "[...] misogyny should be understood primarily as the "law enforce- ment" branch of a patriarchal order, which has the overall function of policing and enforcing its governing norms and expectations."

14| Ibid. " [...] as the "justificatory" branch of a patriarchal order, which consists in ideology that has the overall function of rationalizing and justifying patriarchal social relations."

են, երբ հայրիշխանական կարգը բացատրվում և արդարացվում է այդ տարբերություններով: Ստացվում է, որ մի կողմից հայրիշխանական համակարգը հիմնվում է հստակ գենդերային դերերի տարանջատումների վրա, որը բինարության սկզբունքով կոնկրետ սպասումներ ունի կնոջ և տղամարդու գենդերային դերերից, այդ թվում՝ նաև քաղաքականության մեջ: Իսկ մյուս կողմից՝ որքան էլ կինը հնազանդ կերպով ընդունի իր գենդերային դերը ու խաղա այն հայրիշխանական բոլոր կանոններին համապատասխան, միևնույն է՝ այդ նույն հայրիշխանական համակարգում կին լինելը, կնոջ գենդեր ունենալը նվաստացուցիչ երևույթ է, այլ կերպ ասած՝ զապադլո (западло[15]): Այսինքն՝ հայրիշխանական համակարգում կնոջ տեղը այլությունն է, լռելյայն տղամարդուն հարակից ինչ-որ գոյություն, որը շարունակ արդարացնելու կարիք կա, մինչդեռ սեքսիզմն աշխատում է այդ այլությունը ու դրանից բխող նվաստացումը նորմալացնելու, սովորական ու բնական դարձնելու սկզբունքով:

15| Բառի ծագման պատմությունը կարող եք գտնել այստեղ՝ https://russian7.ru/post/chto-oznachaet-slovo-zapadlo-v-russk/

Այլության այս սկզբունքը եթե պրոյեկտենք հայաստանյան քաղաքական դաշտի վրա, կունենանք այն, որ այդ դաշտը, որն ի սկզբանե (և ամբողջ աշխարհում) կոդավորված է որպես տղամարդկային, կնոջ մուտքը համարելու է «օտարի» ներխուժում: Սրանով էլ կարող ենք բացատրել այն, որ ինչքան էլ որ կին քաղաքական գործիչը խաղա քաղաքականության բոլոր կանոններով, որքան էլ փորձի աշխատել իրական փոփոխություններ բերելու ուղղությամբ, ինչ բարեփոխումներ էլ անի, տղամարդկանց քաղաքականության մեջ նա մնալու է որպես օտար, չպատկանող, չընդունված: Արդյունքում ինչ է մնում կնոջը, եթե ոչ շարունակել իր գենդերային պերֆորմանսը՝ «տղամարդու սևեռված հայացքի» (male gaze) ներքո[16]: Տղամարդիկ էլ, բնական է, որ դժվարությամբ բաց կթողնեն իրենց մասկուլինության հեգեմոնությունը[17]:

16| Bartky, Sandra. "Foucault, Femininity, and the Modernization of Patriarchal Power." In Femininity and Domination: Studies in the Phenomenology of Oppression, 63–82. Routledge, 1990.

17| Connell, Raewyn (1995). Masculinities. Berkeley: University of California Press.

Փորձենք օրինակներով տեսնել, թե սեքսիզմի ինչ դրսևորումների միջոցով են տղամարդ քաղաքական գործիչները «տեղը դնում» կանանց: Առաջին ու թերևս ամենատարածված դրսևորումը կնոջ բարոյականությունը կասկածի տակ դնելն է: Թերևս կհիշեք, թե ինչպես էր ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը պատգամավոր Անի Սամսոնյանին առաջարկում իր մասին քիչ խոսել, որովհետև, ինքն ամուսնացած է, ու *«իմ*

մոտ տպավորություն է, որ ձեր մոտ ինչ-որ մանիակալ բան կա»[18]: Իսկ բոլորովին վերջերս էլ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը լրագրողների հետ ճեպազրույցի ժամանակ առաջարկել էր ընդդիմադիր պատգամավոր Թագուհի Թովմասյանին *«սեռավարակի թեստ հանձնի, որ հասկանանք՝ էդ չորս հատ տունը իրան որտեղից»*[19]: Մեկ այլ ՔՊ-ական պատգամավոր՝ Անդրանիկ Քոչարյանը, որը հայտնի է կին քաղաքական գործիչներին ու իրեն անհարմար հարցեր տվող լրագրող կանանց լռեցնելու իր սեքսիստական հռետորաբանությամբ, արդարադատության նախկին նախարար Արփինե Հովհաննիսյանին ասել էր, *«որ նա պետք է խոսի փաստերով, օրինակ՝ նշելով մոր ու «անհայտ հոր» անունները»*[20]: Այս նույն գործիչը կին լրագրողներին էլ շարունակ հորդորում է «վարսավիրանոց գնալ», *«մաքրել շուրթերը»*, և որևէ պատասխանատվության չի ենթարկվում նման արտահայտությունների համար:

Սեքսիզմի մեկ այլ տեսակ է «կին» երևույթը, կնոջ գենդերը որպես վիրավորանք օգտագործելը՝ տղամարդ քաղաքական հակառակորդին վիրավորելու նպատակով: Երբ ՀՀ երկրորդ նախագահը ՀՀ ներկայիս վարչապետի հասցեին ասում է՝ *«բարեբախտաբար Փաշինյանը աղջիկ չի ծնվել, ազգային խայտառակություն կլիներ»*,[21] սրա հիմքում այն անթաքույց մտածելակերպն է, որ 1) տղամարդուն կին կոչելը վիրավորանք է, 2) կին լինելը ենթադրում է բարոյականությունից զուրկ լինել, և 3) քաղաքականության մեջ կինը չի կարող այլ բան անել, քան ենթարկվել տղամարդ քաղաքական գործիչների կամքին և շարժվել նրանց ընդունած որոշումների համաձայն: Ստացվում է, որ կինը պասիվ օբյեկտ է, որը չունի և չի էլ կարող ունենալ որևէ գործորդություն: Համանման մի ենթադրություն էլ բխում է ՀՀ վարչապետի այն արտահայտությունից, թե *«Սրբազան, գնա շարունակիր քեռուդ կնգան դոմփել, ինձ հետ ի՞նչ գործ ունես»*[22]: Այստեղ էլ կինը սեռական օբյեկտ է, որի ինտիմ կյանքի մանրամասները հեշտ ու հանգիստ բացահայտվում են քաղաքական նպատակներով:

Սեքսիզմի ու կնատյացության այս հաճախակի պոռթկումների արանքում չենք հասցնում պայքարել գենդերային հավասարության համար ու բոլոր կարծրատիպերի դեմ, քանի որ քաղաքական ամենաբարձր ամ-

18| «Ալեն Սիմոնյանի ամբողջ ելույթը խտրականություն էր, սեքսիզմ և նվաստացում՝ ուղղված ընդդիմությանը և հատկապես կնոջը». Զառա Հովհաննիսյան, Մեդիալաբ, https://medialab.am/61573/

19| Հայաստանի իշխող կուսակցության սեքսիզմի խնդիրը, Civilnet, https://bit.ly/49lqJKv

20| Նույն տեղում

21| Հարցազրույցի ժամանակ Ռ. Քոչարյանն անդրադառնում է Ն. Փաշինյանի վարած քաղաքականությանը՝ նշելով, որ վերջինս Հայաստանի տարածքից տալիս է այն ամենը, ինչ ուզում են այլ երկրների ղեկավարները, «Հայաստանի հաշվին Մայր Թերեզա է աշխատում», որին էլ հաջորդում է մեջբերված արտահայտությունը. https://www.youtube.com/watch?v=sbM_DgX8oGc

22| ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի գրառումը ֆեյսբուքում https://www.facebook.com/nikol.pashinyan/posts/pfbid02dvxuULKVbLBdbCuDyjtmZU31wm87pg3WEiBh3SDRnTzxHwE6bXevihjaAPGq6QUUl?rdid=OOttXKwrAgxiKrt6#

բիոններից ու ամենահայտնի դեմքերի կողմից հնչող նմանօրինակ արտահայտություններն ամրապնդում են հայրիշխանության դիրքերը՝ ի հաշիվ կանանց ստորացնելու ու նվաստացնելու: Առանձին քննարկման թեմա է կին քաղաքական գործիչների ներքնայնացված սեքսիզմը, որին չենք հասցնի անդրադառնալ այս հոդվածի շրջանակներում:

Եթե անդրադառնանք նաև քաղաքական ասպարեզում սեքսիզմի այս դեպքերի նկատմամբ վերաբերմունքին ու պատասխանատվության ենթարկելու խնդրին, կարող ենք արձանագրել, որ պատշաճ արձագանքը բացակայում է, և դեպքերը քննարկվում են նեղկուսակցական քաղաքական դիտանկյունից: Էթիկայի կանոնների վերաբերյալ օրենքում, որով առաջնորդվում է ՀՀ ԱԺ Էթիկայի ժամանակավոր հանձնաժողովը, նույնպես չկա գենդերային դիտանկյուն և խտրականության, սեքսիզմի բացառման կետ, այլ պարզապես նշվում է, որ պատգամավորը պարտավոր է *«հարգալից վերաբերմունք ցուցաբերել քաղաքական ընդդիմախոսների, Ազգային ժողովում հարցերի քննարկման մասնակիցների, ինչպես նաև բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ պատգամավորը շփվում է իր լիազորություններն իրականացնելիս» (Հոդված 6.1, կետը)*[23]: Հետևաբար, եթե չկա գենդերի հիմքով խտրականության բացառման կետ, չեն լինում նաև սեքսիստական միջադեպերի քննարկումներ այս հանձնաժողովի կողմից: Համենայն դեպս ԱԺ կայքում հանձնաժողովի էջն այդ մասին է վկայում[24]:

Ի հակադրություն ԱԺ Էթիկայի ժամանակավոր հանձնաժողովի՝ բոլորովին վերջերս երկրի իշխող կուսակցությունը՝ Քաղաքացիական պայմանագիրը, էթիկայի կանոնագիրք ընդունեց[25], որում առանձին կետ կա հավասարության ու խտրականության բացառման մասին: Մասնավորապես.

> *Կուսակցության անդամները պարտավոր են պահպանել հավասարության սկզբունքը՝ մերժելով ցանկացած տեսակի խտրականություն, որը հիմնված է սեռի, էթնիկ պատկանելության, կրոնական համոզմունքի, առողջական վիճակի (այդ թվում՝ հաշմանդամության), կամ որևէ այլ հանգամանքի վրա,*

23| ՀՀ օրենքը «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին https://www.arlis.am/hy/acts/75371

24| ՀՀ ԱԺ Էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողով http://www.parliament.am/committees.php?do=show&ID=111175&lang=arm

25| ՔՊ-ն Էթիկայի կանոնագիրք է ընդունել, Ազատություն ռադիոկայան https://www.azatutyun.am/a/kp-n-etikayi-kanonagirk-e-yndounel/33610651.html

խթանել ներառական, հարգալից ու հավասար հնարավորություններ ապահովող միջավայր Կուսակցության գործունեության բոլոր ասպարեզներում (ՔՊ էթիկայի կանոնագիրք, կետ III):[26]

26| «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության էթիկայի կանոնագիրք https://civilcontract.am/code-of-ethics

Հարկ է նկատել, որ ձևակերպման մեջ բացակայում է «գենդեր» տերմինը, մինչդեռ «սեռ» տերմինից բխում է, որ խտրականությունը կարող է դրսևորվել կենսաբանական առանձնահատկությունների պատճառով, այլ ոչ թե գենդերային, սոցիալական դերերի: Ինչևէ, մեզ մնում է հուսալ, որ ապագայի սեքսիստական միջադեպերը, որոնք, ցավոք, դեռևս անխուսափելի են, կդիտարկվեն ու կգնահատվեն ոչ թե որպես զուտ քաղաքական բանավեճ ու անհամաձայնություն, այլ գենդերային հիմքով խտրականություն, որ ավելի են նեղացնում հասարակական, իսկ այս դեպքում՝ քաղաքական տարածքները կին գործիչների համար:

Քաղաքացիական հասարակությունը՝ երկու, գուցե երեք և ավելի քարերի արանքում

Նշված օրինակներից ու իրողություններից հետո հարց է առաջանում, թե ո՞վ/քեր կամ ինչպե՞ս են հակազդում սեքսիզմին: Սեքսիզմի դեմ համակարգային պայքարի առաջին և հիմնական օղակը միշտ եղել է քաղաքացիական հասարակությունը[27]՝ մեզ հայտնի հարթակներում արշավների և հայտարարությունների միջոցով հանրային անհամաձայնություն ցույց տալով: Ու հենց այստեղ է նաև, որ ինչ-որ տեղ անելանելի վիճակում է հայտնվում հենց քաղաքացիական հասարակությունը: Մի կողմից այն պայքարում է մարդու տարբեր հիմնարար իրավունքների լիարժեք իրացման համար, մյուս կողմից քննադատում է քաղաքականություն մշակողներին և իրականացնողներին իրենց անպատշաճություններում և բացթողումներում, մեկ այլ կողմից էլ փորձում է համագործակցել, օգնել, սատարել այսպես կոչված «պրոգրեսիվ» փոխակերպումները: Չէ՞ որ տարիներ առաջ վերջիններս հենց դրա համար էին միացել անարդարությունների դեմ և պայծառ ապագայի համար պայքարին: Այս առումով խորքային հարցադրման կարիք է առաջանում, որին հնարավոր չէ անդրադառնալ առանց Օդրի Լորդի[28]. արդյո՞ք իրապես հնարավոր է քանդել «տիրոջ» տունը տիրոջ իսկ գործիքներով: Այսօրվա քաղաքական գործիչներից շատերից կարելի է լսել այն փաստարկը, որ իրենք էլ քաղաքացիական հասարակությունից են «տեղափոխվել» քաղաքականություն, որ շատ ավելի լավ են ճանաչում խնդիրները և բաց են լուծումների առաջարկների առաջ: Իհարկե, նման կարգավիճակը փորձառու և խելացի օգտագործելը նույնպես կարևոր ու ռազմավարական է: Սակայն մեկ այլ հարց է առաջանում հենց համակարգի ներսում համակարգի դեմ պայքարի առումով: Արդյո՞ք այդ նույն մարդիկ, որ նախկինում պայքարում էին համակարգի դեմ, փորձում են փոխել համակարգը կամ տիրոջը, թե՞ իրենք էլ խաղում են արդեն գործող խաղի կանոններով:

27| Նյութի շրջանակներում հեղինակները չեն անդրադառնում քաղաքացիական հասարակության ներսում տիրող սեքսիզմին ու դրա ամենատարբեր դրսևորումներին: Այս մասին գուցե հանդես գան մեկ այլ նյութով:

28| Lorde, Audre. "The Master's Tools Will Never Dismantle the Master's House." ***Sister Outsider: Essays and Speeches,*** Crossing Press, 1984, pp. 110–114.

Եվ ընդհանրապես, արդյո՞ք հնարավոր է փոխել մեծ խաղի կանոնները, եթե քաղաքականությունն ինքնին ծառայում է կանոնը ստեղծողին և այն վերարտադրողներին, կարծրացած է և ահռելի մեծ ձկների լողավազան: Բուրդյոն սա բացատրում է նրանով, որ գերիշխող (դոմինանտ) «դաշտ» մտնելը ստիպում է մասնակիցներին կամ ակտորներին ընդունել դրա կանոնները: Այդպես, պաշտոնյա դարձած ակտիվիստները ռիսկի են դիմում վերարտադրելու համակարգի ճնշող տրամաբանությունը[29]: Մեր վերլուծության շրջանակում անընդհատ կրկնվող հարց է առաջանում. արդյո՞ք սեքսիզմով լցված քաղաքական դաշտ մտնելով առանձին անհատները կարողանում են պայքարել դրա դեմ, թե՞ լռում են կամ հանում հարցն օրակարգից (եթե քաղաքականության մեջ սեքսիզմի դեմ պայքարն ընդհանրապես կար օրակարգում): Չմոռանանք նաև, որ ըստ ուժի ու իշխանության վերլուծության՝ որքան շատ ես մոտենում քաղաքական տեղեկատվությանը և որոշումներին, այնքան ավելի կապանքներ են ավելանում դրանք կիսելու առումով[30]: Իրապես, արդյո՞ք այսօրվա քաղաքական դաշտի սեքսիզմի դեմ պայքարում են հենց այդ տրանսֆորմացիայով անցած մարդիկ: Եվ արդյո՞ք հանրային տարածքում տեսնում ենք դրա դեմ պայքար հենց քաղաքական դաշտի ներսից:

29 | Pierre Bourdieu, ***Masculine Domination,*** trans. Richard Nice (Stanford, CA: Stanford University Press, 2001).

30 | Foucault, Michel. (1975). ***Discipline and Punish: The Birth of the Prison.*** Pantheon Books.

Վերջերս քաղաքացիական հասարակության գործընկերների շրջանում ավելի է տարածում գտել «կուլիսային ջատագովության» գաղափարը: Երևույթը նկարագրվում է որպես որոշում կայացնող մեկ անձի հետ ջատագովության իրականացում կամ ոչ հանրային պայմաններում՝ այսպես կոչված կուլիսներում, ջատագովության բուն թեմայի շուրջ զրույցներ և օրակարգի առաջխաղացում[31]: Գուցե ջատագովության այս մոտեցումը պետք է ավելի հեշտացնի սեքսիզմի կամ գենդերային խտրականության դրսևորումների ուղղությամբ աշխատանքը քաղաքական գործիչների շրջանում: Գուցե «նորմալ» է ունենալ կուլիսային ջատագովություն կամ ադվոկացիա, երբ քաղաքական թիմերը փոխվում են: Ինչպես տեսնում ենք, ոմանց մոտ ստացվում է, իսկ ոմանց մոտ՝ ոչ՝ կախված նրանից, թե որն է տվյալ խմբի նպատակը: Բայց արդյո՞ք դա համապատասխանում է արդարության պայքարի անկյունաքարային սկզբունքներին: Չէ՞ որ հենց այս կոնտեքստում է, որ արդարության ջատագովները քննադատվում են որպես լիբերալ և կառավարու-

31 | Կանանց հիմնադրամ, 2025, Գենդերային բռնության ջատագովության ոլորտում կանանց կազմակերպությունների կարողությունների ուսումնասիրություն, լույս կտեսնի շուտով

թյուններին ծառայող, իսկ համակարգերի հետ համագործակցությունը դիտարկվում է որպես բացասական պրակտիկա[32]:

Բայց մի պահ կանգ առնենք. արդյո՞ք քաղաքացիական հասարակությունն ինքնին ունի հիմնարար հակափաստարկ այս մեղադրանքներին: Կամ ինչպիսին է այդ արձագանքը, երբ փողոցի պայքարը վերանում է, իսկ սեքսիզմի ու դրա ամենատարբեր դրսևորումների դեմ ամենաուժգին պայքարները հենց փողոցում են ընթացել, երբ փողոցում գտնվելով և հանրային տարածքներն օգտագործելով վերափոխելու ջանքեր են դրվել հանրային ընկալումներում: Ո՞վ է հաշվի առնում այժմյան փողոցը[33], երբ քաղաքականությունն ինքնին այնքան է վերափոխվել, որ աննշան է դառնում քո՝ փողոցում կոկորդ պատռելու ազդեցությունը: Հայտնի են օրինակներ Վրաստանից, Բելառուսից, տարբեր երկրներում ընթացող Լեռնային Ղարաբաղի/Արցախի, Գազայի և Սուդանի ժողովուրդների կյանքերի համար ցույցերից, որոնք գրեթե ապարդյուն են, երբ քաղաքականությունները չեն արձագանքում դրանց: Քաղաքականություններն անգամ ուշադրություն չեն դարձնում այս տարածքներում տառապող կանանց, երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց կամ այլ խմբերի պատկանող մարդկանց վիճակին: Այս իրավիճակներում համակարգային սեքսիզմի, սեռականության, գենդերային հարցերի, ծառահատումների և այլ հարցերի մասին խոսելը կարծես դառնում է ծիծաղելի և ժամանակավրեպ միամտություն[34], եթե դրանց նկատմամբ չկա քաղաքական կամք՝ տեղական ռազմավարության կամ արտաքին պարտավորության տեսքով:

32| Fraser, Nancy. "Rethinking the Public Sphere: A Contribution to the Critique of Actually Existing Democracy." ***Social Text,*** no. 25/26, 1990, pp. 56–80

33| Bayat, Asef. ***Life as Politics: How Ordinary People Change the Middle East.*** 2nd ed., Stanford University Press, 2013.

34| Ahmed, Sara. ***Living a Feminist Life.*** Duke University Press, 2017

Ամփոփու՞մ կամ նոր մտածելու տեղիք

Դժվար է ակնկալել, որ մեկ տեքստի կամ վերլուծության մեջ կարելի է տեղավորել նման կոնցեպտի ընդհանրական վերլուծությունը՝ առանց նոր մտքերի առաջացման ու բաց հարցերի: Դժվար է նաև գտնել օրինակներ քաղաքական դաշտում սեքսիզմի ամենատարբեր դրսևորումների նկատմամբ հենց քաղաքականությամբ զբաղվողների արձագանքի ու դրանց հանրային դատապարտումների մասին/բովանդակությամբ:

Քաղաքական դաշտի ներսում սեռականացված հայհոյանքների, վիրավորանքների, սեքսիստական խոսքի, ինչպես նաև կանանց մարմիններին վերաբերյալ նսեմացնող մեկնաբանությունների նկատմամբ բացահայտ կամ հանրային քննադատությունը, կարելի է ասել, բացակայում է: Համենայն դեպս, նման իրավիճակների քննադատությունը հենց քաղաքական գործիչների կողմից և հենց իրենց գործընկերների նկատմամբ հանրությանը հասանելի չէ: Իսկ քաղաքական ինստիտուտները պետք է լինեն հենց այդ հարթակները, որտեղ սահմանվում են նորմերը և դրվում սահմանները: Չնայած վերջերս Քաղաքացիական պայմանագիր կուսակցությունն ընդունել է էթիկական կանոնագիրք, դեռևս վաղ է խոսել դրա՝ քաղաքական մշակույթի և պատասխանատվության փոխակերպող ազդեցության մասին:

Ակնհայտ է, որ համակարգային սեքսիզմի հաղթահարման ուղղությամբ աշխատանքը չի կարող լինել երկու կամ երեք խորհրդարանականի կամ քաղաքական գործչի, մեկ կամ երկու բլոգերի պատասխանատվությունը: Առաջ են գալիս շատ ավելի խորքային հարցեր՝ ներառյալ այն, թե, օրինակ, ինչպես է ձևավորվում քաղաքական դերա-

կատարների հաջորդ սերունդը: Ո՞վ է նրանց սովորեցնում ոչ սեքսիստական մոտեցումներ: Ո՞վ է նրանց բացատրում, թե ինչու են խոսքի որոշ ձևեր ոչ էթիկական և վնասակար: Ո՞վ է մշակում և նորմավորում քաղաքական դպրոցների, երիտասարդական թևերի և քաղաքական իշխանության վերարտադրման այլ ուղիների բովանդակությունները:

Այս համատեքստում ևս մեկ անգամ երևան է գալիս քաղաքացիական հասարակության դերի կարևորությունը ոչ թե այն պատճառով, որ վերջինս միշտ «պատասխանողի» կամ «արձագանքողի» դերում պետք է լինի, այլ որովհետև քաղաքական դաշտն ինքնին հազվադեպ է ստեղծում ինքնաքննադատության կամ ինքնակարգավորման մեխանիզմներ: Այդպես, քաղաքացիական հասարակությունը, կրկին բարձրաձայնելով այս մտահոգությունները, ստեղծում է դիսկուրս, պահպանում է իր պահանջատիրական դերը, մինչդեռ քաղաքական հարթակներն ու համակարգերը շարունակում են լռել և խուսափել պատասխանատվությունից (մեր մշակութային համատեքստում ինչու ոչ՝ նաև խայտառակությունից):

Կարևոր է գիտակցել, որ ջատագովությունն առանց հանրության համար տեսանելի, առօրյա և հիմնարար խնդիրների անդրադարձի մնում է չհասկացված և կիսատ: Սա է նաև տասնյակ պատճառներից ընդամենը մեկը, որ սեքսիզմի նկատմամբ հրապարակային քննադատությունները հանրության կողմից նույնպես քարկոծվում են՝ որակվելով որպես արհեստական: Սեքսիզմը չի վերանում միայն քաղաքականությունների և ռազմավարությունների շնորհիվ: Այն վերարտադրվում է ամենօրյա խոսքում, պրակտիկաներում, դիսկուրսներում, քաղաքական դաշտի ներկայացուցիչների վարքում և դրա դատապարտման բացակայության պայմաններում: Երբ այս խնդիրներն արձագանք չեն ստանում, համակարգային սեքսիզմի դեմ պայքարը վերածվում է սիմվոլիկ գործողության:

Օգտագործված գրականություն

Ahmed, Sara. *Living a Feminist Life.* Durham: Duke University Press, 2017.

Bartky, Sandra. "Foucault, Femininity, and the Modernization of Patriarchal Power." In Femininity and Domination: Studies in the Phenomenology of Oppression, 63–82. Routledge, 1990.

Bayat, Asef. *Life as Politics: How Ordinary People Change the Middle East*. 2nd ed. Stanford: Stanford University Press, 2013.

Beauvoir, Simone de. *The Second Sex.* Translated by Constance Borde and Sheila Malovany-Chevallier. New York: Vintage Books, 2011.

Bourdieu, Pierre. *Masculine Domination.* Translated by Richard Nice. Stanford, CA: Stanford University Press, 2001.

Butler, Judith. *Gender Trouble: Feminism and the Subversion of Identity.* New York: Routledge, 1999.

Connell, Raewyn Masculinities. Berkeley: University of California Press. 1995.

Foucault, Michel. *Discipline and Punish: The Birth of the Prison.* New York: Pantheon Books, 1975.

Fraser, Nancy. "Rethinking the Public Sphere: A Contribution to the Critique of Actually Existing Democracy." *Social Text,* no. 25/26 (1990): 56–80.

Lorde, Audre. "The Master's Tools Will Never Dismantle the Master's House." In *Sister Outsider: Essays and Speeches,* 110–114. Trumansburg, NY: Crossing Press, 1984.

Manne, Kate. Down Girl: The Logic of Misogyny. New York: Oxford University Press, 2018.

Կանանց հիմնադրամ. *Գենդերային բռնության ջատագովության ոլորտում կանանց կազմակերպությունների կարողությունների ուսումնասիրություն.* 2025 (լույս կտեսնի շուտով)

Օնլայն աղբյուրներ

Arlis
https://www.arlis.am/hy/acts/75371

Azatutyun
https://www.azatutyun.am/a/kp-n-etikayi-kanonagirk-e-yndounel/33610651.html

Civil Contract
https://civilcontract.am/code-of-ethics

CivilNet.
https://www.civilnet.am/news/974239

Facebook
https://www.facebook.com/nikol.pashinyan/posts/pfbid02dvxuULKVbLBdbCuDyjtmZU31wm87pg3WEiBh3SDRnTzxHwE6bXevihjaAPGq6QUUl?rdid=OOttXKwrAgxiKrt6

Factor TV
https://factor.am/876370.html

MediaLab
https://medialab.am/61573/

Parliament
http://www.parliament.am/committees.php?do=show&ID=111175&lang=arm

Russian7
https://russian7.ru/post/chto-oznachaet-slovo-zapadlo-v-russk/

Women's Fund Armenia
https://womenfundarmenia.org/%d6%84%d5%a1%d5%b2%d5%a1%d6%84%d5%b8%d6%82%d5%b4-%d5%b8%d5%b9%d5%ab%d5%b6%d5%b9-%d5%b9%d5%ab-%d6%83%d5%b8%d5%ad%d5%be%d5%a5%d5%ac-%d5%b8%d6%82%d5%b2%d5%b2%d5%a1%d5%af%d5%ab-%d5%bf%d6%80%d5%a1%d5%b6/?lang=hy

YouTube
https://www.youtube.com/watch?v=sbM_DgX8oGc
https://www.youtube.com/watch?v=-6DG-3SEHow

Երևան 2026